Դ· ՏԱՐԻ ԹԻՒ 884 ՀԻՆԳՇԹԻ 11 ՅՈՒՆՎԱՐ 1879

# ԼՐԱԳԻՐ

ՏՆՕՐԷՆ ԽՄԲԱԳԻՐ
ԵՒ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՅՈՎ. Մ. ԹԻՒԼՊԵՆՏՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ
Ղալաթիա Բէրչէմպէ Բազար Երփ խանի դէմը Սամուր փողոց Թիւ 12

ԱԶԳԱՅԻՆ

ԹԵՐԹԸ 1 Դհ. ԹՈՒՂԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
[illegible]
Կ. Պոլսոյ համար
Տարեկան Ղրշ. 250
Վեցամսեայ » 130
Եռամսեայ » 70
Գաւառաց համար
Տարեկան Ղրշ. 330
Վեցամսեայ » 170
Եռամսեայ » 90
Օտար երկիր տարին 40 Ֆրք.

## ԹՈՒՐՔԻՈՅ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ ԲԱՐՁՈՒՄՆ ՊԱՐՏՈՒՑ

Հողագործ կամ մշակ ընտանիքներ շատ կան Թուրքիոյ մէջ, մանաւանդ Ասիոյ կողմերը, որոնք եթէ այնքան անհուն ընդարձակութեամբ հողերուն մշակութեանը անբաւական գտուին, կառավարութիւնը կրնայ Բուլէլիէն վտարանդող այնքան թիւրաւոր գաղթականներէն պարկեշտ ընտանիքներն ալ իբրև հողագործ կամ մշակ այս բանին գործածել, որոնք կրնան լաւ գաղթականութիւն մը հաստատել, իսկ առանց նոր գաղթականութեանց պէտք կենալու, տեղացի բնիկ ժողովուրդներն ալ բաւական են, եթէ կառավարութիւնը կանխելով իրենց հող և դրամ տալ խոստանայ երկիրը մշակելու համար։

Մինակ եթէ մտածելու դըժուար բան մը կայ նէ՝ ան ալ հարկաւոր եղած ստակն ու դրամագլուխը գտնելն է այդ հողագործ ընտանիքները բնակեցնելու, երկիրը մշակելի ընելու և մշակութեան հարկաւոր եղած նիւթերը, գործիները, հունտը, սերմը, արջառը, ձին ևլն. գտնելու համար։

Ասոր ալ երկու միջոց կայ, կամ օտար դրամագլխու դիմելու է, փոխարէն մշակելի երկիրներ տալով, և կամ ասոր տեղը բռնելու կարող դրամական գործողութեան մը դիմելու է։

Այս վերջին միջոցը ձեռք առնումք իբրև անմիջական և հետևաբար աւելի գործնական միջոց մը։

Որոշեալ թուով ընտանիքներ —200 ընտանիք օրինակի համար— խմբովին բնակեցնելու է այնքան ընդարձակութեամբ երկրի մը վրայ, որ իւրաքանչիւր ընտանիքի —հնգական անդամէ բաղկացեալ— 110 ական արտավար (տէօնիւմ) անկ կարենայ իյնալ։

Սոյն 200 ընտանեաց յատկացեալ երկրին մասը անբաժանելու է առնուազն 3 տարիէն մինչև գոնէ 5 տարի, որով և ամբողջ երկիրը այսքան ատեն հանրաբար մշակուելով, մշակելութեան վիճակը կապահովուի և ուզուած ուղղութիւնը կրնայ տրուիլ։ Այս պայմանա-
[illegible]
կէրները բաժնուելու են զայդ մշակող ընտանեացը մէջ, Պետութեան կողմանէ ցոյց տըրուած երկրաչափներու ձեռօք, և բաժանման ծախքն ալ ընտանեաց վրայ ըլլալով։

Իւրաքանչիւր ընտանիք, իրեն բաժնին ընկած երկրին արժէքին փոխարէնը, 15 կամ 20 կամ 30 տարուան մէջ թերհաշիւ վճարքներով հատուցանելու կալուածական պարտամուրհակ մը կ'տայ տարեկան 0/0ին 8 կամ 10 կամ 12 տոկոսով, և ամեն տարի որոշեալ օրերու մէջ լիջեալ պարտամուրհակին նոյն տարուան տոկոսն ու գլխավճարը հատուցանելով, որոշեալ պայմանաժամուն պարտքը կը ջնջուի և ինքն ալ հողի տէր կըլլայ։

Կալուածական կամ հողային պարտամուրհակներն ընդհանրապէս կ'պարունակեն՝ առնըւած հողինյարժողութեան գումարը, այդ երկիրը մշակելի ընելու համար երկրագործին փոխ տրուած դրամագլուխը, այս 2 գումարներուն ալ տարեկան տոկոսքը, ասոնցմէ զատ նաև կալուածական կամ հողային տուրքը տասանորդի փոխարէն, վարչական ծախքը, ևլն. այնպէս որ այդ երկիրը ով որ ալ գնելու ըլլայ, դարա նոր հողատէրը՝ լիջեալ կալուածական պարտամուրհակին տարեկան վճարքէն զատ ուրիշ մէկ ստակ հատուցանելու պարտք մը չունենար։

Ասոր մէկ օրինակը գտեալ ու կ'գործադրուի նոյն իսկ Ռումանիոյ մէջ։

Քուզա իշխանին օրովը 1864 էն օրէնք մը հրատարակուեցաւ, որոյ զօրութեամբը՝ նոյն Ռումէնիո երկիրներուն ստացուածատէր կըլլային բոլոր այն գիւղացիքը, որք Պետութեան վերջերեալ երկիրներուն մէջ 12 տարըէ ի վեր տարապարհակ կաշխատէին ու կ'մշակէին իբրև թափու։ Այս գիւղացիք Քլաքաշ կ'կոչուէին, որ տեսակ մը գերի կամ ծառայ ըսել է։

Քլաքաշներուն տրամադրութեանը թողուած երկիրները մասամբ մը Պետութեան, մասամբ մ'ալ Պօյարներուն (վլահ ազնուականաց) սեպհականութիւնն էին։ Գիւղացիք իրենց թողուած երկրին արժէքը կամ փոխարէնը պիտի վճարէին 15 տարուան մէջ, որոյ վերջին տարեկան վճարքն ալ կ'աւարտի 1880ին։ Ասոնց տրուած և ստորագրած հողային պարտամուրհակներն եւրոպայի գրեթէ բոլոր հրապարակաց վրայ ալ յարգի բռնուելէ չեն դադրած։

Բայց Քլաքաշները, որոնք իրենց ծախուած երկրին երեսը մինակ գրեթէ կ'մշակէին, բաւ որուն ո՛չ երկրագործական գործիներու պէտք ունէին, ոչ հունտի և ոչ կենդանեաց, զորոց ամենքն ալ ունէին, ուստի եւ հողային բաշխումն ալ իրենց ունեցածին վրայ բաժնուած էր, որուն որ ունէր երկու զոյգ եզ և կով մը (կաթնտու), որուն ունէր մէկ զոյգ եզ և կով մը, և վերջապէս որուն ունէր սակ կաշին մը և կով մը, անոր համեմատ երկրի մաս մը կ'տրուէր իրեն բաժին։ Երկու զոյգ եզ և կով մ'ունեցողներուն՝ 14 բօկօն տեղ տրուած էր, որ կ'հաւասարի Թուրքիոյ 80 արտավար (տէօնիւմ) տարածութեան։

Մինակ այս օրինակը բաւական է հաստատելու թէ մեր յառաջ բերած այս դրութիւնը և միջոցը նորութիւն մը չէ։ Մինակ թէ մեր գիւղացւոց համար հատուցման 15 տարուան պայմանաժամ մը շատ կարճ ըլլալով, քիչ մ'աւելի մինչև 25 կամ 30 տարի երկարելու է զայդ։

Հողային պարտատոմսերն, որոց իւրաքանչիւրը ամեն մէկ ընտանեաց թողուած երկրին կամ 110 արտավար գետնին արժէքը կ'ներկայացնէ, նոյնինքն կառավարութեան կողմանէ շրջաբերութեան կ'հանուի, ծախուած երկիրներուն արժէքն ալ իր երաշխաւորութեանը տակ առնելով։ Հողին արժէքին հաւասար գումար մ'ալ Պետութիւնը փոխ կ'տայ երկրագործին, երկիրը բանեցնելու և մշակելու համար դրամագլուխ մ'ըլլալու նպատակաւ։ Այս փոխառութիւնն ալ Պետութենէն ընելու համար, պէտք է հաշուել ու գնահատել թէ՝ մշակելի հողը՝ 15 տարիէն ետքը իր այժմու արժէքին կրկնապատիկը պիտի արժէ, ենթադրութիւն մը՝ որ չկրնար անընդունելի նկատուիլ։

## ԱԶԳԱՅԻՆ

Վարչութեան Քաղ. Ժողովը երէկ ի Ղալաթիա Խորհրդական սրբազանին նախագահութեանը ներքև՝ իր սովորական նիստն ընելով, միմիայն Պիւճէի խնդրովը զբաղեցաւ։

Վարչութեան անդամներէն Մանուկեան Սինէքերիմ և Հաշարեան Կարապետ էֆ. ներն անձնական զբաղմանց պատճառաւ՝ վերջնական հրաժարագիր ղրկած էին։

